ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

«30» Հոկտեմբեր 2022թ. N ՄՈ/683-Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱԶՄԿՈՄԻՏԵՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 5-ի N 280-Ն հրամանով հաստատված կարգի 4-րդ կետի 3-րդ ենթակետը.

որոշում եմ՝

1. Հաստատել՝

1) Մարզային կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.
2) Տարածքային կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N 2 հավելվածի.
3) Մարզային առարկայական հանձնաժողովների նախագահների անվանական կազմը՝ համաձայն N 3 հավելվածի.
4) Տարածքային առարկայական հանձնաժողովների նախագահների անվանական կազմը՝ համաձայն N 4 հավելվածի.

2. Մարզային և տարածքային կազմկոմիտեների նախագահին (Ս.Բուդաղյան)՝ կազմկոմիտեի աշխատանքներին մասնակից դարձնել «Արմավիրի Զորավար Անդրանիկ Օզանյանի անվան N 5 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գ.Գասպարյանին և «Վաղարշապատի Հ. Հովհաննիսյանի անվան N 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գ.Ներսիսյանին:

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

3. Մարզային և տարածքային կազմկոմիտեների նախագահին (Ս.Բուդաղյան)՝ կազմակերպել 2022-2023 ուսումնական տարվա դպրոցականների առարկայական օլիմպիադաների տարածքային և մարզային փուլերը:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսական բաժնի ավագ մասնագետին (Ս.Սաֆարյան)՝ օլիմպիադայի տարածքային և մարզային փուլերը անցկացնելու համար իրականացնել անհրաժեշտ գրենական պիտույքների գնման գործընթացը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

30.11.2022

VERIFIED OCSP 30.11.2022 17:57:10 GMT+4

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

0901 ք. Արմավիր, Արովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am